

Սերգեյ Մարաբյան

ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի
ամբիոնի ասիստենտ, իրավ. գիտ. թեկնածու,
ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի խորհրդական

ՔՐԵԱԿԱՆ ՂԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻՎԿԱՆ ՀԱՅՑԻ ԾԱԳՄԱՆ ԵՎ ՋԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՏՄԱՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԳԱՐՑԵՐԸ (ՀԱՄԵՄԱՄԱՏԱԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ)

Ղատավարագիտությունում ընդունված մոտեցման համաձայն քրեական դատավարությունում քաղաքացիական հայցի ինստիտուտի նախահայրը համարվում են Ֆրանսիական և Գերմանական քրեական դատավարության կանոնադրություններում ամրագրված համանուն ինստիտուտները¹: Մեր իրավական համակարգում քաղաքացիական հայցի ինստիտուտի ծագումը կապվում է 1864 թվականի Ցարական Ռուսաստանի «Քրեական դատավարության կանոնադրության»² հետ, որում ամրագրված քաղաքացիական հայցի ինստիտուտը մի շարք սկզբունքային փոփոխություններով պահպանվեց Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո ընդունված խորհրդային բոլոր, ինչպես նաև հետխորհրդային (ԱՊՀ) երկրների, այդ թվում՝ Հայաստանի քրեադատավարական օրենսգրքերում:

Մասնագիտական գրականության ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հայցի ինստիտուտի ծագումը պատմականորեն հիմնականում կապվում է քրեական և քաղաքացիական իրավագործությունների բաժանման և դրանով պայմանավորված՝ քրեական դատավարության տիպի և ձևի, քրեական և քաղաքացիական իրավունքների փոխկապվածության, գործող ապացուցողական համակարգի, դատարանի կողմից բացահայտվող ճշմարտության բնույթի և այլնի հետ:

Հասարակական կյանքի սկզբնական շրջանում, երբ հանցագործության վերաբերյալ տիրում էին մասնավոր-իրավական պատկերացումները, որի դեպքում խոսք անգամ չէր կարող լինել հասարակական վնասի և հասարակական շահերի մասին, իսկ հանցագործու-

¹ Այս հարցերի մասին մանրամասն տե՛ս Կալինին Դ.Գ. Гражданский иск в уголовном деле или соединенный процесс, 1888, Киев և այլն:

² Այսուհետև՝ Կանոնադրություն:

յունների ողջ ոլորտը սահմանափակվում էր միայն արարքներով, որոնք ներառում էին միայն անձնական և նյութական վնասը, ցանկացած պահանջ, որը ծագում էր վիճելի իրավահարաբերություններից, դիտարկվում էր որպես մասնավոր հայց և պատկանում էր բացառապես տուժողին կամ նրա ընտանիքի անդամներին¹, իսկ հանցագործության համար պատասխանատվությունը հիմնականում նույնացվում էր վնասի հատուցմանը²: Այլ կերպ՝ սկզբից գոյություն է ունեցել հենց հայցը՝ առանց հանրայինի (ժամանակակից քրեական հայցը կամ մեղադրանքը) կամ մասնավորի (քաղաքացիական)³ առանձնացման: Ժամանակի ընթացքում, երբ հանցագործության հիմքում դրվեց «հանրային բնույթի» գաղափարը, որի դեպքում առաջնայինը պետական և հասարակական շահն էր, դատավարությունը բաժանվեց⁴ հանրայինի (քրեականի) և մասնավորի (քաղաքացիականի) փոփոխվելու մաս հանցագործության համար պատասխանատվության բնույթը. վնասի հատուցումն այլևս քրեական պատասխանատվու-

¹ Տե՛ս Энрико Ферри, Уголовная социология. М., 2005, с. 452, 579, Թովմասյան Ա., Հին և միջնադարյան հայ քրեական իրավունք, Երևան, 1962թ., էջ 430-446, Хосров Торосян Суд и процесс в Армении X-XIII вв., Ереван, 1985, с. 192-222:

² Այս հարցերի մասին մանրամասն տե՛ս Թովմասյան Ա., Հին և միջնադարյան հայ քրեական իրավունք, Երևան, 1962թ., էջ 430-446:

³ Այս հարցերի մասին մանրամասն տե՛ս Квачевски А. А., Об уголовном преследовании, дознании и предварительном исследовании по судебным уставам 1864 года: Теоретическое и практическое руководство. СПб., 1866, с. 64-74, Рязановский В.А., Единство процесса. М., 1996, с. 5-18, Стефановский К., Разграничение гражданского и уголовного судопроизводства в истории русского права. Жур. Мин. Народного просвещения, ч 165, февраль, 1873, ч 166, март, 1873 և այլն:

⁴ Իրավունքի պատմության հարցերով զբաղվող մասնագետների զննատնայինը՝ նման բաժանումը տեղի է ունեցել 18-19-րդ դարերում: Ռ. Պետրոսյանի պնդմամբ մինչև 19-րդ դարի առաջին կեսի ավարտը իրավունքի բոլոր համակարգերում (...) քրեական դատավարությունը նույնիսկ քաղաքացիական դատավարության մասն էր համարվում (տե՛ս Պետրոսյան Ռ.Գ., Դատարանը և քաղաքացիական դատավարությունը Արևելյան Հայաստանում XIX-XX դարերում, Երևան, 2001, էջ 47-48): Թեև պետք է նկատել, որ հայ իրավունքում քաղաքացիական և քրեական վարույթները որոշակիորեն տարբերակում էր դեռևս Մխիթար Գոշը, մա առանձին հարցերի վերաբերյալ էլ նշելով իրավահարաբերության բնույթից, սահմանում էր դատավարական առանձին կարգեր: Այս հարցերի մասին մանրամասն տե՛ս Хосров Торосян, Суд и процесс в Армении X-XIII вв., Ереван, 1985, с. 220-222:

յան միջոց չէր համարվում, այլ դիտվում էր որպես մասնավոր հարց¹: Դրանով պայմանավորված՝ դատավարությունների բաժանման սկզբնական ժամանակահատվածում, երբ քրեական գործերով վարույթը ենթարկվեց **քննչական կամ հետախուզական** վարույթի ձևերին և կանոններին (ելենելով հանցագործության հանրային բնույթից), քրեական դատավարությունում նախատեսված չէր հանցագործությունից տուժող մասնավոր անձանց մասնակցությունը՝ որպես վարույթի կողմ. նրանք հանդես էին գալիս վկայի կարգավիճակով, իսկ հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման համար հայցով պետք է դիմեին բացառապես քաղաքացիական դատարան², ինչը հաճախ բարդացնում էր տուժողների շահերի պաշտպանությունը և դատական պրակտիկայում հանգեցնում վնասների հատուցման «մոռացության», մասնավոր հաշվեհարդարի ավելացման, վնասների հատուցման մասով հանրային արդարադատության նկատմամբ վստահության կորստի և այլն³: Սակայն, Դ.Գ. Տալբերգի վկայությամբ, այդպիսի կարգը երկար չդիմացավ. երկու բարեկամական հայցերի քննության անհարմարությունը պրակտիկայում չհապաղեց և արդյունքում **ռոմանագերմանական իրավական համակարգի երկրներում, մասնավորապես՝ Ֆրանսիայում, Գերմանիայում և այլն** (ընդգծումը - Ս.Մ.) ձևավորվեց հատուկ դատավարական ձև, որը գերմանական դատավարագիտությունում հայտնի է «միացյալ վարույթ» (Adhasioenprocess) տերմինով⁴: Դա քրեական և քաղաքացիական հայցերի համատեղ քննությունն էր միևնույն քրեական վարույթի շրջանակներում: Ուշագրավն այն է, որ անգլոսաքսոնական իրավական համակարգում այդ միացումը այդպես էլ տեղի չունեցավ, և տուժողները ստիպված էին, ընդ որում՝ մինչ այժմ էլ, դիմելու քաղաքացիական դատավարությանը: Այդ կարգը որոշ չափով փոխվեց միայն վերջերս, երբ անգլոսաքսոնական իրավական համակարգի ուրոշ երկրներում (Ճապոնիա, Մեծ Բրիտանիա, Իռլանդիա, Կիպրոս և այլն), սկսած նախորդ դարի 70 - ական թվականներից, մշակվեցին հանցագործությամբ պատճառված վնասի հատուցումը քրեական դատավարության կարգով ապահովելու տարբեր օրենսդրական մե-

¹ Տե՛ս Թալբերգ Դ. Գ., նույն տեղում:

² Տե՛ս Թալբերգ Դ. Գ., նույն տեղում:

³ Տե՛ս Էնրիկո Փերրի, նույն տեղում:

⁴ Տե՛ս Թալբերգ Դ. Գ., նույն տեղում:

խանդիզմներ¹, օրինակ՝ փոխհատուցման (compensation order) հրամանան արձակելը Անգլիայում¹, սակայն ոչ քաղաքացիական հայցի ինստիտուտը:

Նշենք, որ թեև քրեական և քաղաքացիական հայցերը միավորվեցին, և ձևավորվեց հատուկ դատավարական ձև, սակայն տարբեր երկրներ այդ միացման հիմքում դրեցին տարբեր գաղափարախոսություն, ու այդպիսով պատմականորեն ձևավորվեցին քաղաքացիական հայցի տարբեր մոդելներ:

Այսպես, 18-19 դարերի գերմանական իրավունքում քաղաքացիական հայցը անվանվում է միացյալ վարույթ (Adhasioenprocess), որը հիմնված է այն գաղափարախոսության վրա, որ տուժողի հայցը սովորական քաղաքացիական հայց է, ինչպես և ցանկացած այլ մասնավոր անձի հայց, որը վերաբերում է քաղաքացիական իրավունքի ոլորտին: Դրա հետևանքով քրեական դատավարությունում տուժողի քաղաքացիական հայցը ներկայացվում է այն նույն ձևերով, ինչպես պահանջում է քաղաքացիական դատավարությունը: Հայց կարող է հարուցել միայն այն անձը, ով քաղաքացիական դատավարությունում կարող է հանդես գալ որպես հայցվոր և պատասխանող: Տուժողի հայցը վարույթ ընդունելու համար դատարանը պետք է ունենա երկու իրավագործություն՝ քաղաքացիական գործերով ընդհանրապես և կոնկրետ գործով մասնավորապես: Տուժողն իրավունք չունի օգտվելու այն ապացույցներից, որոնք անթույլատրելի են քաղաքացիական դատավարությունում, մեղադրողի կողմից բերվող ապացույցները թույլատրվում են օգտագործել այնքանով, եթե դրանք բավարարում են քաղաքացիական դատավարության պահանջներին: Վնասների հատուցման մասով դատավճիռը կայացվում է քաղաքացիական դատավարության կանոններով. տուժողն օգտվում է բողոքարկելու այն միջոցներից, որոնք գործում են քաղաքացիական դատավարությունում: Դատական ծախսերի և դատավճիռը կատարելու հարցերը իրականացվում են քաղաքացիական դատավարության կարգով: Հանցագործությունից ծնվող տուժողի հայցը

¹ Այս հարցերի մասին մանրամասն տե՛ս Дубровин В.В. Гражданский иск и другие институты возмещения вреда от преступлений в уголовном судопроизводстве (международный, зарубежный, отечественный опыт правового регулирования): дисс. канд, юрид. наук. М., 2010, с. 60-79.

Ներկայացնելով որպես սովորական քաղաքացիական հայց՝ գերմանական համակարգը այն դիտում է երկրորդական և համարում է որպես հավելյալ (accessorium): Դրա հետևանքն այն է, որ տուժողը կարող է հայց հարուցել ոչ շուտ, քան սկսված է քրեական հետապնդումը, ընդ որում՝ միայն այն դեպքում, եթե հայցն ուղղված է կոնկրետ անձի դեմ, քանի որ քաղաքացիական դատավարությունում հայց չի կարող հարուցվել, եթե պարզ չէ պատասխանողը: Քրեական դատավարությունն այս կամ այն հիմքով դադարեցնելու դեպքում դադարում է նաև Adhasioenprocess-ը: Ընդ որում՝ անկախ այն բանից՝ գոյություն ունի նյութական հնարավորություն տուժողի հայցը շարունակելու, թե ոչ, այդ հայցը առաջարկվում է ներկայացնել քաղաքացիական դատավարության կարգով: Տուժողի հայցը՝ որպես հավելյալ, քրեական դատավարությունում ունի երկրորդական տեղ (causa minor): Դրանով բացատրվում է դատավորի անսահմանափակ իրավունքը՝ ի սկզբանե չթույլատրել կամ քննության ժամանակ ոչնչացնել միացյալ վարույթը այսպես կոչված Verweisung ad separatum սկզբունքի միջոցով, որի իմաստն այն է, որ բոլոր այն դեպքերում, երբ դատարանի կարծիքով միացումը կարող է առաջացնել քրեական վարույթի բարդություններ, այն թողնվում է առանց քննարկման և փոխանցվում է քաղաքացիական դատավարություն: Այլ կերպ՝ տուժողը, որին թույլտարվել է մասնակցել քրեական գործին, կարող է օգտվել իր իրավունքներից, եթե դրանով չի պատճառում անհարմարություններ քրեական գործին²: Այն հարցին, թե ինչու է նախատեսված հայցի քննությունը քրեական դատավարությունում, գերմանական դատավարագիտությունում նշվում է, որ դա հետապնդում է վարույթի պարզեցման, տուժողի՝ ժամանակի և գումարների կորուստը կանխելու, ապացույցների հավաքումը հեշտացնելու նպատակ և այլն³: Ըստ այդ էլ Լ.Մ. Բեռլինը նշում է, որ քաղաքացիական հայցը քրեական դատավարությունում գերմանական իրավունքում չի հիմնավորվում տեսականորեն, այլ պայմանավորված է պրակտիկ նպա-

¹ St'u Powers of Criminal Courts Act 1973 [Electronic resource] / Website of UK Office of Public Sector Information. URL: http://www.opsi.gov.uk/acts/acts1973/pdf/ukpga_19730062_en.pdf

² Այս հարցերի մասին մանրամասն տե՛ս Берлин Л. М. Гражданский иск потерпевшего от наказуемого правонарушения: к вопросу о подсудности этого иска. СПб, 1888. с. 55-61.

³ Նույն տեղում, էջ 62:

տակահարմարությամբ¹:

Նույն ժամանակաշրջանի հայցի ինստիտուտի ֆրանսիական մոդելը եականորեն տարբերվում է գերմանականից, հատկապես գաղափարախոսության առումով, թեև հանցագործությունից ծնվող տուժողի հայցը ֆրանսիական իրավունքում նույնպես ճանաչվում է քաղաքացիական, որն ընդդատյա է ոչ միայն քրեական, այլև քաղաքացիական դատարանին: Կ.Ֆ. Գուցենկոն, Լ.Վ. Գոլովկոն և Բ.Ա. Ֆիլիմոնովը անդրադառնալով 1958 թվականի Ֆրանսիական քրեական դատավարության օրենսգրքում ամրագրված քաղաքացիական հայցի և քրեական մեղադրանքի կամ հանրային հայցի հարաբերակցության հարցին, նշում են, որ ֆրանսիական քրեական դատավարությունում հայցերի վերաբերյալ ուսմունքը օրենսդրորեն և ղկտորինալ առումով ձևավորվել է մի քանի հարյուրամյակների ընթացքում: Դեռևս 1532 և 1670 թվականների միջնադարյան օրդոնանսներում հայտնվում է հանրային և մասնավոր հայցերի բաժանում որպես հանցագործությունից հասարակության և անձի պաշտպանության երկու ինքնուրույն միջոց: Ֆրանսիական քրեական դատավարության տեսության այս նվաճումը ինկվիզիցիոն դատավարությունից չի հերքվել նույնիսկ արմատական փոփոխություններով տրամադրված հեղափոխության ժամանակաշրջանի օրենսդրի կողմից, որը (*հայցերի ուսմունքը-Ս.Ս*) վերածվեց ավանդույթի, քանի որ երկու հետագա քրեական դատավարության օրենսգրքերը (1808 և 1958 թվականների) նույնպես բացվում են երկու հայցերի հայեցակարգը ամրագրող հոդվածներով², որը գոյություն է ունեցել քրեական դատավարության իրավունքում³:

Չեղինակների գնահատմամբ՝ հանրային և քաղաքացիական հայցերի մասին ուսմունքը հիմնվում է բավականաչափ հայտնի այն հայեցակարգի վրա, որի համաձայն՝ հանցագործությունը միաժամանակ վնաս է պատճառում ինչպես հասարակությանը, այնպես էլ մասնավոր անձին (տուժողին): Չտևաբար և՛ հասարակությանը, և՛ մաս-

¹ Նույն տեղում, էջ 62:

² Ֆրանսիական քր. դատ. օր.-ի ներածական մասը վերնագրված է «Քրեական և քաղաքացիական հայցերի մասին», իսկ 1-10-րդ հոդվածները վերաբերում են քրեական և քաղաքացիական հայցերի իրավական բնույթի, դրանք հարուցելու կարգի, պայմանների, ժամկետների, սուբյեկտների, հարաբերակցության և այլ հարցերի կարգավորմանը:

³ Гуценко К. Ф., Головки Л. В., Филимонов Б. А. Уголовный процесс западных государств. Изд. 2-е, доп. и испр., М., 2002. С. 331-333.

նավոր անձին պետք է իրավունք վերապահի պահանջելու դատական կարգով հատուցելու այդ վնասը: Այդ նպատակով՝ հասարակությանը հնարավորություն է տրված այսպես կոչված «հանրային հայցի», քանի որ այդ դեպքում խախտվել է հանրային շահը: Ինքնին ենթադրվում է, որ հանրությունը իր շահը կարող է պաշտպանել միայն որոշակի ներկայացուցչի միջոցով, որը գործում է նրա անունից, և յուրաքանչյուր կոնկրետ գործով այդպիսին հանդես է գալիս հատուկ այդ նպատակով ստեղծված պետական մարմին դատախազությունը, որը և իրականացնում է հասարակության հանրային հայցի իրավունքը հանցանք կատարած անձի դեմ ներկայացնելով: Ինչ վերաբերում է այդ նույն հանցագործությունից տուժած մասնավոր անձին, ապա քանի որ նա գործում է մասնավոր շահի, այլ ոչ թե հանրային շահի պաշտպանության համար, ուստի նրան իրավունք է վերապահված պաշտպանելու իր իրավունքները քաղաքացիական հայց հարուցելու միջոցով¹: Հեղինակները ասվածից հետևություն են անում, որ Ֆրանսիական քրեական դատավարությունում քաղաքացիական հայցը չի կարող ընկալվել նեղ ցիվիլիստական կամ քաղաքացիաիրավական իմաստով: Եթե տուժողը մեղադրայի դեմ չունի ոչ մի գույքային պահանջ, որ կապված կլինի նրա խախտված քաղաքացիական իրավունքների վերականգնման հետ, այլ ուղղակի ցանկանում է մասնակցել վարույթին որպես լիիրավ կողմ, որպեսզի պետական մեղադրանքի ներկայացուցչի հետ միասին հասնի արդարության վերականգնման, իրեն «մեղացնողին» մեղավոր ճանաչելուն և այլն, ապա նա, լինելով մասնավոր անձ և չունենալով դրա ուժով որևէ իրավունք *ex officio*, բոլոր դեպքերում պետք է հարուցի քաղաքացիական հայց և հանդես գա որպես քաղաքացիական հայցվոր²:

Լ.Մ. Բեռլինի կարծիքով՝ թե ի վերջո ինչու է թույլատրվում քաղաքացիական հայցը հարուցել քրեական դատավարությունում, ֆրանսիական համակարգում բացատրում են նրանով, որ տուժողը համարվում է անմիջապես մեղադրող՝ ոստիկանական իրավախախտումներով և զանցանքներով: Հանցագործությունների վերաբերյալ գործերով ֆրանսիական դատավարությունում տուժողը համարվում է «համամեղադրող», որը տարբերվում է հանրային մեղադրողից նրանով, որ իրավունք չունի պետությունից պահանջելու հանուն պե-

¹ Նույն տեղում:

² Նույն տեղում:

տական շահերի պատիժ, այդուհանդերձ տուժողը շարունակում է մնալ որպես մեղադրող, որը հետապնդում է իր սեփական նպատակները՝ պաշտպանելով իր շահերը: Հանուն այդ շահերի էլ պետությունն իրեն իրավունք չի վերապահում տուժողին զրկել քրեական դատավարության կարգով հատուցում ստանալու հնարավորությունից: Հեղինակի պնդմամբ հենց այս է համարվում ֆրանսիական իրավունքի բնութագրիչ գիծը, որը տարբերվում է գերմանական իրավունքից: Ասվածն առավել վառ արտահայտվում է այն բանում, որ ֆրանսիական իրավունքին հայտնի չէ հայցի երկրորդականության (causa minor) սկզբունքը: Դատարանին ոչ մի դեպքում իրավունք չի վերապահված **Verweisung ad separatum**, ինչը ինքնին ունի որոշիչ նշանակություն քրեական դատավարությունում տուժողի դերը որոշելու հարցում: Ֆրանսիական իրավունքին օտար է նաև հավելյալականության (accessorium) սկզբունքն այն տեսքով, ինչպես այն ընկալվում է գերմանական իրավունքում. հանրային հայցի ճակատագիրը չի կարող անվերապահորեն ազդել մասնավոր հայցի վրա. եթե վերջինս ներկայացված է ճիշտ, ապա այն լուծվում է քրեական դատարանի կողմից՝ անկախ այն բանից, թե դատարանն ինչ որոշում է ընդունում պատժի մասին: Մեղադրյալի մահը միայն մի դեպքում է հարկադրում տուժողին դիմելու քաղաքացիական դատարանին, երբ այն տեղի է ունեցել մինչև մեղքի հարցի լուծումը, հակառակ դեպքում մեղադրյալի մահը չի ազդում հայցի ընդդատության վրա: Ամբաստանյալի արդարացումը միայն այն դեպքում է փոխում հանցագործությունից ծնվող տուժողի հայցի ընդդատությունը, երբ այդ իրավախախտումը ճանաչվել է ոչ պատժելի, ընդ որում՝ հանցագործությունների վերաբերյալ գործերով այս դեպքում նույնպես դատարանը լուծում է վնասի հատուցման հարցը: Վերջապես, տուժողը քրեական դատարանում կարող է վնասի հատուցում պահանջել ոչ միայն ամբաստանյալից, այլև երրորդ անձանցից ևս, որոնք մեղադրյալի գործողությունների համար պատասխանատվություն են կրում և այլն¹:

Ցարական Ռուսաստանի իրավաբանական գրականությանն անդրադառնալիս տեսնում ենք, որ հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման հայցի ընդդատության հարցում գերիշխող է այն մոտեցումը, որ հայցը միացյալ վարույթ է, ինչպես գերմանական իրավունքում, այսինքն՝ հայցը քաղաքացիատարական ինս-

¹ Берлин Л. М., նույն տեղում, էջ 141-148:

տիտուտ է, որը սկզբունքորեն ընդդատյա է բացառապես քաղաքացիական դատարանին, իսկ դրանից շեղումները բացատրվում են զուտ գործնական պատկերացումներով: Դրա վկայությունն է, օրինակ, 1888 թվականի Դ.Գ. Տալբերգի **«Քաղաքացիական հայցը քրեական գործում կամ միացյալ վարույթ»** հիմնարար աշխատությունը, որում հեղինակը գրեթե կրկնօրինակում է միացյալ վարույթի վերաբերյալ գերմանական գաղափարախոսությունը: Նա մասնավորապես նշում է, որ միացյալ վարույթի համակարգը սկզբունքորեն պայմանավորված չէ հայցերի բնույթից բխող բացարձակ և ներքին անհրաժեշտությամբ. առանց դրան էլ է հնարավոր, ինչպես գործող շատ դատավարական կանոնադրություններ: Այդուհանդերձ չպետք է հերքել, որ հանցագործությունից ծնվող երկու հայցային վարույթների միավորումը տալիս է այնպիսի առավելություններ, օգուտներ, որոնք գործնական և իրավական առումով բացարձակ վկայում են օրենսդրորեն այդ դատավարական ձևի թույլատրելիության մասին: Այս դատավարական ձևի էությունն այն է, որ հանցագործությունից վնաս կրած անձը հանցագործությունից բխող իր քաղաքացիաիրավական պահանջները միավորում է այդ հանցագործության առթիվ հարուցված քրեական գործին, որը բացառություն է քրեական և քաղաքացիական դատարանների ընդհանուր սահմանազատումից: Հայցի գոյության վերաբերյալ հեղինակի փաստարկները հիմնականում երկուսն են: Միացյալ վարույթի օգտին են խոսում նախևառաջ իրավաքաղաքական բնույթի պատկերացումները, այն է՝ պետությունը չի կարող անտարբեր մնալ հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման հարցի նկատմամբ, քանի որ այդ վնասը հիմնականում հանցակազմի մեջ է մտնում և վերաբերում է հանրային շահին ու հետապնդվում է *ex officio*: Ձգտելով արդարադատության բարձր խնդիրների իրականացման՝ հանրային իշխանությունը պարտավոր է **հնարավորինս ապահովել**, մեղմել տուժողի մասնավոր իրավունքների շուտափույթ վերականգնումը, իսկ միացյալ վարույթը դրա իրականացման լավագույն միջոցն է: Այս դատավարական ձևի օգնությամբ միաժամանակ լուծվում են պատժիչ, քրեական և քաղաքական խնդիրներ, ինչպես նաև ապահովվում են մասնավոր անձանց խախտված իրավունքների վերականգնումը: Հաջորդ փաստարկները վերաբերում են հիմնականում դատավարության տնտեսման, ժանկետների կրճատման, միևնույն հարցերի վերաբերյալ հա-

կասական հետևությունների անթույլատրելիությանը և այլն¹: Յեղի-նակի հետագա դատողությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ հայցի հիմքում ընկած է երկրորդականության սկզբունքը, ինչպես գերմանական իրավունքում: Նա մասնավորապես նշում է՝ այնտեղ, որտեղ հասարակական շահը բախվում է առանձին անձանց շահերի հետ, վերջիններս պետք է ենթարկվեն, զիջեն առաջիններին: Սրա ուժով միացյալ վարույթում հանրային հայցը կամ քրեական գործը համարվում է գլխավոր, իսկ քաղաքացիականը՝ երկրորդական կամ կողմնակի, առաջինը երկրորդի նկատմամբ միշտ ունի առավելություն: Վերոնշյալի հիման վրա նա հետևություն է անում, որ միացյալ վարույթը թույլ է տրվում պայմանով, որ քրեական գործի վարույթը չձգձգվի, ընթանա առանց քաշքշուկների, իսկ քաղաքացիական հայցվորին չի կարող թույլատրվել որևէ բան, որը կարող է խոչընդոտել քրեական գործի քննությունը: Այն դեպքում, երբ դատավորը դժվարանում է հանցագործությամբ պատճառված վնասի չափի հաշվարկման հարցում, և ընդհանրապես քրեական գործով բոլոր հնարավոր խառնաշփոթի դեպքում քաղաքացիական հայցը չի թույլատրվում, իսկ սկսված վարույթը ենթակա է դադարեցման, և **ad separatum** պետք է ներկայացվի քաղաքացիական դատարան: Թեև քրեական և քաղաքացիական հայցերը միավորվում են մի վարույթում, սակայն դրանցից յուրաքանչյուրը պահպանում է իր ինքնուրույնությունը և ենթարկվում է այն կանոններին, որոնք սահմանված են քրեական և քաղաքացիական դատավարություններում: Լինելով ոչ ավելին, քան քաղաքացիական հայցի միացումը քրեական վարույթին, ընդ որում՝ միացում, որն արտացոլվում է առավելապես արտաքին ձևով, որն ունի ձևական բնույթ՝ առանց հայցերի ամբողջական միախառնման, միացյալ վարույթը չի համարվում հատուկ դատավարական ինստիտուտ² և այլն:

Անհրաժեշտ է նկատել, որ Ցարական Ռուսաստանի 1864 թվականի Կանոնադրության ուսումնասիրությունը հակառակն է վկայում. այնտեղ ամրագրված հայցի ինստիտուտը, ունենալով գերմանական իրավունքին բնորոշ տարրեր, ամբողջությամբ չի համարվում միացյալ վարույթ, ինչպես նշում է Տալբերգը: Նրա գաղափարախոսությունը հակված է առավելապես ֆրանսիական մոդելին, որի հիմքում ընկած հայեցակարգը կարելի է բնութագրել որպես **օրգանական ամ-**

¹ Տե՛ս Կալեբերգ Դ. Գ., նշված աշխատությունը, պար. 12:

² Տե՛ս Կալեբերգ Դ. Գ., նշված աշխատությունը, պար. 2, 3, 7, 9, 10:

բողջականություն, այլ ոչ թե միացյալ վարույթ¹: Ֆրանսիական քաղաքացիական հայցը ձևական առումով կարող է կոչվել միացյալ վարույթ, եթե հիմք ենք ընդունում այն գաղափարը, որ քրեական դատավարության առաջնային խնդիրը քրեաիրավական հարցերի լուծումն է, ընդ որում՝ ի պաշտոնե, իսկ քաղաքացիական հայցը վերաբերում է մասնավոր հարցի, որի լուծումը կախվածության մեջ է գտնվում տուժողից: Ընդ որում՝ հայցի լուծումը միշտ պայմանավորված է մեղադրանքի հարցի լուծումից, սակայն բովանդակային առումով հայցը քրեական վարույթի օրգանական մասն է:

Այս ամենն առավել պատկերավոր է ներկայացված Ա. Կվաչևսկու և Լ. Բեռլինի աշխատություններում: Նրանք, մեկնաբանելով Կանոնադրության առանձին դրույթներ, հայցը ներկայացնում են որպես քրեական դատավարության օրգանական մաս՝ ընդունելով նաև քաղաքացիական դատավարությունում այդ հայցի հարուցման հնարավորությունը: Այսպես, Ա. Կվաչևսկին նշում է՝ ըստ Կանոնադրության 6-րդ և 7-րդ հոդվածների՝ հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման հայցը կարող է հարուցվել կան քրեական, կան քաղաքացիական դատարանում: Սակայն հայցը լուծելու համար գլխավոր կանոնը այս կան այն դատարանի ընտրության հարցում պետք է համարել քրեական ընդդատությունը՝ հայցի հարուցումը քրեական դատարան: Օրենքն այս ընդդատությունը նախընտրում է այն պատճառով, որ մասնավոր անձի շահերը և հանրային շահերը միանում են միևնույն գործում, քրեական հետապնդման և քա-

¹ Կարծում ենք՝ չպետք է համաձայնվել այն հեղինակների հետ, որոնք, խոսելով ֆրանսիական քաղաքացիական հայցի ինստիտուտի մասին, այն ներկայացնում են որպես միացյալ վարույթ: Հայցի ֆրանսիական մոդելը ոչինչ չունի գերմանական դոկտրինայում գոյություն ունեցող միացյալ վարույթի հայեցակարգի հետ: Դրանք էականորեն տարբերվում են միմյանցից ինչպես հայցի ինստիտուտի գոյության գաղափարով, այնպես էլ օրենսդրական կարգավորման առանձնահատկություններով: Միացյալ վարույթ հասկացությունը Ֆրանսիական իրավունքում կարող է օգտագործվել զուտ ձևական առումով, մասնավորապես ընդգծելու քաղաքացիական և քրեական հարցերը մի վարույթում լուծելու գաղափարից ելնելով, սակայն բովանդակությամբ Ֆրանսիական քրեական դատավարությունը կոչված է ոչ միայն քրեաիրավական, այլև քաղաքացիական հարցերի լուծման համար: Ավելին, հաճախ քաղաքացիական հայցի լուծում պահանջելը հիմք է քրեական վարույթ հարուցելու համար: Հենց այս գաղափարախոսությունն է, որ առանձնացնում է ֆրանսիական հայցի մոդելը՝ այն վերածելով քրեական դատավարության օրգանական մասի:

ղաքացիական հայցի ապացույցները հաճախ նույն աղբյուրից են ծնվում, քաղաքացիական հայցվորը քրեական հայցին տալիս է ուժ և թափ, ի վերջո քրեական մեղքը և քաղաքացիական հայցվորին դրանով պատճառված վնասը ծնվում են մի առարկայից՝ հանցավոր գործողությունից: Այս պատկերացումներով օրենքը ցանկանում է, որ քրեական և քաղաքացիական հայցերը քննի միևնույն քրեական դատարանը, որպեսզի պետությունը ի դեմս քաղաքացիական հայցվորի չկորցնի քրեական մեղադրանքի գործունեության օգնականին, որպեսզի **միևնույն գործը չբաժանվի երկու ինքնուրույն վարույթների**, որպեսզի քաղաքացիական դատարանի վրա չկուտակվի այնքան աշխատանք, որը հանցագործությունը քննելիս, որպես հայցի հիմքի առավել հեշտ և հարմարավետ կիրականացվի քրեական դատարանի կողմից: Հենց այս պատճառով էլ օրենքը առաջնայնություն է տալիս քրեական ընդդատությանը և սահմանում է, որ քաղաքացիական հայցվորը կարող է քրեական դատարանում սկսել իր գործը և իրավունք ունի դիմելու քաղաքացիական դատարանին միայն այն դեպքում, երբ իր հայցը քրեական դատարանում չի հարուցում մինչև նիստի բացումը: Սրա հետ մեկտեղ՝ օրենքը չի ցանկանում սահմանափակել մասնավոր անձի քաղաքացիական իրավունքները և դրա համար նրան հնարավորություն է տալիս հարուցելու քաղաքացիական հայց այս կամ այն դատարանում: Սակայն երբ այդ հայցը հարուցվում է քաղաքացիական դատարանում, ապա այն կասեցվում է, եթե քրեական գործը հարուցվել է մինչև այն կամ մինչև քրեական գործի ավարտը սկսված քաղաքացիական վարույթի ընթացքում: Օրենքի այս պահանջի հիմքում ընկած է միևնույն առարկան երկու տարբեր դատարաններում քննելը և որոշումներում տարաբնույթ լուծումները բացառելու ձգտումը: Վերոնշյալ նոտեցումներին համապատասխան՝ օրենքը առաջնայնություն է տալիս քրեական դատարանին, նրա վերջնական դատավճռին: Այսպիսով, օրենքը քաղաքացիական դատարանից պահանջում է ոչ միայն սպասել քրեական դատարանի վերջնական որոշմանը, այլև պարտադիր հաշվի առնել քրեական դատարանի որոշմամբ հաստատված հանգամանքները, ընդ որում՝ այնպես, ինչպես դա դատարանն է որոշել, օրինակ՝ արարքը առկա՞ է, թե՞ ոչ, անձի մեղքը հաստատվա՞ծ է, թե՞ ոչ և այլն¹:

Ռուսական հայցի ինստիտուտը առավել ամբողջական է ներկա-

¹ Стен Берлин Л.М., նշված աշխատությունը, էջ 301-307:

յացնում Լ.Ս. Բեռլինը, որը, վերլուծելով Կանոնադրությունը և այն համեմատելով Ֆրանսիական, Գերմանական և Ավստրիական օրենսդրության հետ, հանգում է այն հետևության, որ Կանոնադրության հիմքում առավելապես ընկած է հայցի Ֆրանսիական մոդելը (թեև, ըստ նրա՝ տվյալ ժամանակաշրջանի դատավարագիտությունը հիմնվել է հիմնականում Գերմանական դոկտրինայի վրա, որը և մեր կարծիքով՝ համարվում է ողջ խառնաշփոթի հիմքը), **այսինքն՝ օրգանական ամբողջականության հայեցակարգը**: Հեղինակը մասնավորապես նշում է՝ ի հակադրություն գերմանական իրավունքի՝ ռուսական իրավունքը պատժելի իրավախախտումից ծնվող հայցը չի դիտում որպես **մաքուր քաղաքացիական**, իսկ տուժողին հնարավորություն է տալիս հայցը ներկայացնելու քաղաքացիական դատարան բացառության կարգով, որը պայմանավորված է հայցի զուտ մասնավոր բնույթով¹: **Ռուսական** նյութական իրավունքը տուժողի հայցը ճանաչում է այն աստիճան քրեականին մոտ, որ վնասի չափի հաշվարկները քրեական իրավունքի օրինակով որոշում է դիտավորության և հանցանքի կատարմանը անձի մասնակցության աստիճանով²: Հեղինակը գտնում է, որ քրեական դատարանը համարվում է տուժողի հայցի պատշաճ դատարան, իսկ քաղաքացիական դատարանը ֆակուլտատիվ է: Նա, չհամաձայնվելով ռուսական դատավարագիտության մեջ իշխող այն մոտեցմանը, որ քաղաքացիական հայցի համար պատշաճ դատարանը քաղաքացիականն է, նշում է, որ այդ մոտեցման հիմքում հիմնականում դրված է այն գաղափարը, որ հայցի ընդդատությունը որոշվում է դատարան ներկայացված պահանջի բովանդակությամբ: Եթե դատարանը պետք է որոշում ընդունի պատժի մասին, ապա գործը ընդդատյա է քրեական դատարանին, իսկ եթե այդ գործում դատարանը պետք է որոշում կայացնի վնասների հատուցման մասին, ապա այն ընդդատյա է քաղաքա-

¹ Վնասի հատուցման նյութաիրավական բնույթին կանդրադառնանք ստորև:
² Հեղինակի այս մոտեցումները պայմանավորված են այն հանգամանքով, որ տվյալ ժամանակաշրջանում գործող «Քրեական և ուղղիչ պատիժների մասին օրենքների հավաքածուում» առաձին գլուխ է նվիրված (գլուխ 2-րդ) վնասների հատուցման հարցերին, որը վերնագրված է «Վնասների և կորուստների հատուցման մասին», և ներառում է 59-64 հոդվածները, որոնք կարգավորում են վնասների հատուցմանը վերաբերող նյութական իրավա-հարաբերությունները: Ի դեպ, այդ նորմերի տրամաբանությունը գրեթե նույնանում է ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ ամրագրված վնասների հատուցմանը վերաբերող նորմերի տրամաբանությանը:

ցիական դատարանին՝ անկախ այն բանից, թե այդ իրավախախտումը պատժելի է, թե ոչ: Չհամաձայնվելով այդ մոտեցմանը՝ նա նշում է՝ ընդդատության այսպիսի որոշման դեպքում քաղաքացիական դատարանին ընդդատյա կլինեն ինչպես պատժելի, այնպես էլ ոչ պատժելի իրավախախտումները, իսկ քրեական դատարանին՝ միայն պատժելի իրավախախտումները, սակայն ոչ բոլոր հետևանքներով հանդերձ, այլ միայն պատժի հարցերով: Այլ կերպ ասած՝ քրեական և քաղաքացիական ընդդատությունների բաժանման հարցում էականը համարվում է միայն դատարան ներկայացվող պահանջի բնույթը, այլ ոչ թե իրավախախտման բնույթը, որը առաջացրել է այդ պահանջները¹: Յեղիմակը գտնում է, որ հենց այստեղ է թաքնված սխալը, քանի որ դատարանների ընդդատությունը պետք է որոշվի ոչ թե պահանջի բնույթով, այլ այն իրավախախտման բնույթով, որն ընկած է հայցի հիմքում: Դատարանների միջև աշխատանքի բաժանումը արվում է ոչ թե բացառապես նրանց ուղղված պահանջի բնույթով պայմանավորված, այլ համաձայն իրավախախտումների փաստական բովանդակության տարբերության, որոնցից ծնվում է այս կամ այն պահանջը: Յեղիմակը այս մոտեցումը հիմնավորում է՝ համենատարբեր անցկացնելով քրեական և քաղաքացիական դատավարությունների միջև և ցույց տալով դրանց հիմքում ընկած հիմնարար սկզբունքները: Քրեական դատավարության առանձնահատկություններից է այն, որ այնտեղ ձգտում են բացահայտելու նյութական ճշմարտությունը, որի հետ կապված են հանրայնության սկզբունքը, ապացույցների հատուկ համակարգը և այլն: Քաղաքացիական դատավարությունում դատարանը բավարարվում է ձևական ճշմարտությամբ, որի հետ կապված են դիսպոզիտիվության սկզբունքը, ապացույցների համակարգի առանձնահատկությունը, վարույթի կազմակերպման և իրականացման առանձնահատկությունները: Քաղաքացիական դատավարությունը կարող է իր խնդիրը համարել լուծված, եթե նա վիճող կողմերին համոզում է իր որոշման ճշմարտացիությունը կամ եթե իր որոշումը հիմնավորում է կողմերի ներկայացրած ապացուցողական նյութի հիման վրա: Դրանից դուրս հասարա-

¹ Նշենք, որ հայրը քրեական դատավարությունից բացառողները, ինչպես նաև հայրը քաղաքացիադատավարական ինստիտուտ ներկայացնողները նույնպես այս գաղափարախոսությունն են դնում հայցի հիմքում, այսինքն՝ ոչնչով չեն տարբերվում ինչպես 19-րդ դարի, այնպես էլ ներկայիս դատողությունները հայցի բնույթի, ընդդատությունը որոշելու վերաբերյալ:

կությունը քաղաքացիական դատարանից այլ բան չի պահանջում: Քրեական դատարանի նկատմամբ հասարակության պահանջը առավել խիստ է: Նրա որոշումները չպետք է կախվածության մեջ լինեն այն բանից, թե դատավարության կողմերը ինչքանով են օգտվել իրենց իրավունքներից ճշմարտությունը բացահայտելու համար: Քրեական դատարանի որոշումից պահանջվում է, որ այն հիմնված լինի իրականությանը համապատասխանող դրույթների վրա: Միայն այս պայմանի դեպքում այն կհամարվի իրավաչափ և կհամապատասխանի իր նշանակությանը: Չպետք է նաև մոռանալ, որ դատավճռի էությունը ոչ թե պատժի որոշման մեջ է, այլ այն դատապարտման, որի համար պատիժը արտաքին արտահայտությունն է: Այդ դատապարտման մեջ կարևոր է ոչ թե արտաքին կողմը, ոչ թե այն, ինչին անձը դատապարտվեց, այլ այդ դատապարտման ներքին բովանդակությունը, այն, թե ինչու անձը դատապարտվեց, ինչ է նրան մեղսագրվել՝ պատժելի կամ ոչ պատժելի իրավախախտում, եթե այո, ապա ինչպիսի՞: Եթե քրեական և քաղաքացիական դատավարություններին ներկայացվող հիշյալ տարբերությունները կախված են այն բանից, որ անձին կարելի է մեղսագրել պատժելի իրավախախտում միայն նյութական ճշմարտության հիման վրա, ապա ակնհայտ է, որ որևէ կապ չպետք է ունենա այն հանգամանքը, թե ինչ նպատակով պետք է որոշել անձի մեղավորության հարցը՝ պատիժ նշանակելու՞, թե՞ վնասի հատուցման հարկադրելու: Ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ դեպքում դատարանը չի կարող սահմանափակվել ձևական ճշմարտությունով, այստեղից էլ չի կարելի չհանգել այն հետևության, որ պատժելի իրավախախտումից ծնվող վնասների հատուցման հայցը քաղաքացիական դատարանի լուծմանը ներկայացնելու պահանջը չի կարող համարվել ճշմարտացի, քանի որ այն կարող է հանգեցնել անլուծելի բարդությունների: Այս դեպքում, եթե քաղաքացիական դատարանից պահանջվի իր որոշումը հիմնավորել նյութական ճշմարտությամբ, ապա դա կհակասի քաղաքացիական դատավարության հիմնական սկզբունքներին, իսկ եթե սահմանափակվենք միայն ձևական ճշմարտությունով, ապա այդ որոշումը կհակասի հասարակական իրավագիտակցությանը, որը չի թույլատրում անձին մեղսագրել պատժելի իրավախախտում՝ հասարակության համար ոչ հանդիշ ձևական ճշմարտության վրա հիմնվելով: Այս իրավիճակից միակ ելքը կարող է լինել միայն այն, որ պատժելի իրավախախտումից ծնվող վնասների հատուցման հայցը տրվի լուծե-

լու քրեական դատարանին, որը պարտավոր է իր որոշումը հիմնավորել նյութական ճշմարտության հիման վրա: Նյութական ճշմարտության հետ անքակտելիորեն կապված է նաև քրեական և քաղաքացիական դատավարությունների երկրորդ տարբերությունը՝ նյութական ճշմարտությանը հնարավոր չէ հասնել առանց հանրայնության հիմքի: Դիսպոզիտիվության սկզբունքը յուրաքանչյուր պահի կարող է ոչնչացնել նյութական ճշմարտությանը հասնելու ողջ ձգտումը, մինչդեռ քաղաքացիական դատավարությունում դիսպոզիտիվությունը համարվում է հիմնական սկզբունքը: Հեղինակը քաղաքացիական դատավարության կարգով տուժողի հայցը ներկայացնելու հնարավորությունը պայմանավորում է նրանով, որ եթե քրեական վարույթն այս կամ այն պատճառով չի իրականացվում կամ դադարեցվում է, ապա տուժողը չպետք է զրկվի վնասի հատուցում ստանալու հայցով դատարան դիմելու հնարավորությունից, իսկ եթե քաղաքացիական դատավարության կարգով նա չկարողանա դիմել, ապա կսահմանափակվի նրա վնասի հատուցում ստանալու իրավունքը¹:

Հայցի համար քրեական դատարանը պատշաճ դատարան լինելու և ռուսական իրավունքը հայցի ֆրանսիական մոդելին հակված լինելու իր մոտեցումը Լ. Բեռլինը հիմնավորում է՝ նաև համեմատություն անցկացնելով երկու համակարգերում ընդունված հավելյալականության (accessorium) և երկրորդականության (causa minor) սկզբունքների միջև, մասնավորապես այն տեսանկյունից, թե որ դեպքերում է քրեական վարույթի կարճումը հանգեցնում հայցային վարույթի դադարեցման, և որ դեպքերում է, որ քրեական վարույթը կարճելիս հայցը շարունակվում է այդ վարույթում: Քանի որ միացյալ վարույթի դեպքում քրեական վարույթի դադարումը անկախ հիմքից հանգեցնում է հայցի դադարեցման, իսկ եթե քրեական վարույթում հայցը որոշակիորեն ազդում է քրեական վարույթի վրա՝ ձգձգման կամ այլ բարդությունների ձևով, դատարանին իրավունք է վերապահված միացմանը վերջ դնելու **Verweisung ad separatum**-ի միջոցով, մինչդեռ ռուսական իրավունքում ֆրանսիական իրավունքի օրինակով քրեական վարույթը բացառիկ դեպքերում կարող է հանգեցնել քաղաքացիական հայցի վարույթի դադարեցման². դատարանը չի կարող հայցը փոխանցել քաղաքացիական դատարանին բար-

¹ Տե՛ս Берлин Л.М. Աշխատությունը, էջեր 6-17:

² Այս հարցերին մանրամասն կանդորադառնանք սույն աշխատանքի երրորդ գլխում, ուստի այստեղ կսահմանափակվենք ընդհանուր գնահատականով:

դությունների դեպքում, այլ պարտավոր է լուծել քրեական դատավարության շրջանակներում, հաշվարկների բարդությունների դեպքում քրեական գործի ավարտից հետո դատավորներից մեկը քրեական վարույթի շրջանակներում իրականացնում է այդ հաշվարկները և այլն, հեղինակը նշում է, որ ռուսական իրավունքը հակված է առավելապես ֆրանսիական մոդելին¹:

Նկատենք, որ Լ. Բեռլինի և Ա. Կվաչևսկու մոտեցումները քրեական դատավարությունում քաղաքացիական հայցի գոյության հիմնավորման համար արդիական են մինչ այժմ, այդ նույն փաստարկներով ամբողջական հիմնավորվում է հայցի գոյությունը քրեական դատավարությունում նաև ներկայումս:

Ֆրանսիական և գերմանական գործող քրեադատավարական օր.-երի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ֆրանսիական հայցի մոդելը զրեթե փոփոխության չի ենթարկվել. այն նույն գաղափարախոսությունը, որով հիմնավորվում էր հայցի գոյությունը քրեական դատավարությունում 18-19-րդ դարերում, պահպանվել է մինչ այժմ²:

Ինչ վերաբերում է գերմանական իրավունքին, ապա այն ենթարկվել է որոշակի փոփոխությունների մասնավորապես քրեական դատավարությունում տուժողի կարգավիճակի հարցում. գործող քր. դատ. օրենսդրությամբ՝ տուժողը համարվում է դատավարության կողմ մասնավոր մեղադրողի, համամեղադրողի կարգավիճակով: Այսինքն՝ տուժողը գործող գերմանական իրավունքում համարվում է սեփական շահերը հետապնդող դատավարության կողմ, թեև պետք է խոստովանել, որ ոչ այն կարգավիճակով, ինչ ֆրանսիական, ռուսական և հայկական գործող իրավունքներում: Հավելենք նաև այն, որ թեպետ տուժողի կարգավիճակը ամրապնդվել է գերմանական իրավունքում, սակայն հայցի ինստիտուտը³ դրանից էական փոփոխութ-

¹ Այս հարցերի մասին տես Берлин Л.М. նշված աշխատությունը, էջեր 166, 193-211:

² Տես Дубровин В.В., նշված աշխատությունը, էջեր 124-135, Гуценко К. Ф., Головкин Л. В., Филимонов Б. А. Уголовный процесс западных государств. Изд. 2-е, доп. и испр., М., 2002. С. 331-333.

³ Նշենք, որ, ի տարբերություն ֆրանսիական քր. դատ. օր.-ի, գերմանական գործող քր. դատ. օր.-ում քաղաքացիական հայց և հայցվոր հասկացություններ չեն օգտագործվում. դրանք քաղաքացիաիրավական և քաղաքացիադատավարական հասկացություններ են: Գերմանիայի քր. դատ. օր.-ի 5-րդ գրքի 3-րդ գլուխը վերնագրված է տուժողին պատճառված վնասի հատուցումը, իսկ այնտեղ ամրագրված 403-ից 406-րդ հոդվածներում խոսվում է

յունների չի ենթարկվել. այն պահպանել է միացյալ վարույթի ընդհանուր գաղափարախոսությունը¹:

Վ.Վ. Դուբրովինի ներկայացմամբ՝ գերմանական իրավունքում տուժողի սեփականությանը պատճառված նյութական վնասը քրեական դատարանը հատուցելու մասին որոշում է ընդունում միայն այն դեպքում, երբ այդ վնասի հատուցման պահանջը նախապես ներկայացված է եղել քաղաքացիական դատավարության կարգով: Հակառակ դեպքում դատարանը վնասի հատուցումը բավարարելու մասին որոշում կարող է կայացնել, սակայն բռնագանձման ենթակա կոնկրետ գումարը դատարանը պետք է հաշվարկի քաղաքացիական դատավարության կարգով¹: Ուշագրավ է նաև այն, որ գերմանական քր. դատ. օր.-ում պահպանված է նաև **Verweisung ad separatum** սկզբունքը (հոդված 405), տուժողը իր միջնորդության մեջ պետք է նշի նաև այն ապացույցները, որոնցով հիմնավորում է իր պահանջը (հոդված 404), միջնորդություն ներկայացնելն ունի այն նույն հետևանքները, ինչ քաղաքացիաիրավական վեճի դեպքում (հոդված 404, մաս 2) և այլն: Ընդ որում՝ առավել սկզբունքային է այն, որ Գերմանիայի քր. դատ. օր.-ի՝ տուժողին պատճառված վնասի հատուցման վարույթը կանոնակարգող 403-406 հոդվածներում պարբերաբար հղում է կատարվում քաղաքացիական դատավարության օրենսգրքին:

Ինչևէ, վերլուծելով քրեական դատավարությունում քաղաքացիական հայցի ինստիտուտի պատմական ձևավորման և հետագա զարգացման հիմնախնդիրները, տարբեր երկրներում դրա օրենսդրական նկարագրությունը, դրա հիմքում ընկած գաղափարախոսությունը, այն խնդիրները, որոնք լուծվում են յուրաքանչյուր երկրում հայցի ինստիտուտի միջոցով, կարելի է թվարկել այն սկզբունքները, որոնց հիման վրա որոշվում է, թե հայցը հիմնված է **միացյալ վարույթ**², թե՞ **օրգանական ամբողջականության** հայեցակարգի վրա: Այդ սկզբունքները հետևյալն են՝

1) տուժողը ի՞նչ դատավարական կարգավիճակ ունի քրեական

այդ հատուցումը քաղաքացիաիրավական պահանջով ապահովելու մասին, որը Դուբրովինի գնահատմամբ համարվում է ոչ այլ ինչ, քան քաղաքացիական հայց քրեական դատավարությունում // տե՛ս Дубровин В.В., նշված աշխատությունը, էջ 113/:

¹ Տե՛ս Дубровин В.В., նշված աշխատությունը, էջեր 111-136:

դատավարությունում և ի՞նչ գործառույթներ է իրականացնում. տուժողը սովորական վկա՞ է, լոկ քաղաքացիական կո՞ղմ, թե՞ հանդես է գալիս մեղադրանքի կողմում, որպես համամեղադրող, մասնավոր մեղադրող և պաշտպանում է իր անձնական շահերը,

2) հայցը քրեական վարույթի ո՞ր պահից կարող է հարուցվել և ինչպե՞ս. միացյալ վարույթի դեպքում հայցը հարուցվում է միայն սկսված քրեական վարույթի պայմաններում և քաղաքացիական դատավարության կանոններով մասնավորապես, եթե առկա է պատասխանողը, այսինքն՝ հայցը միանում է քրեական վարույթին, իսկ օրգանական ամբողջականության հայեցակարգի դեպքում հանցագործության մասին հաղորդման հետ միաժամանակ, անկախ այն բանից՝ հայտնի՞ է պատասխանողը, թե՞ ոչ: Ավելին, օրգանական ամբողջականության դեպքում քաղաքացիական հայց հարուցելը կարող է հիմք հանդիսանալ քրեական վարույթ սկսելու համար (Ֆրանսիական մոդել), եթե ակնհայտ է լինում դրա ծագումը հանցագործությունից²:

3) քաղաքացիական հայցի ապացուցումն իրականացվում է քաղաքացիադատավարակա՞ն ապացուցման միջոցներով, թե՞ քրեադատավարական, և դա իրականացվում է ի պաշտոնե վարույթն իրականացնող մարմինների՞ կողմից, թե՞ հայցվորի,

4) քրեական վարույթում հարուցված հայցը ինչպե՞ս է դադարում քրեական դատավարությունում, մասնավորապես՝ քրեական գործը կարճելու դեպքում հայցը կարճվու՞մ է, թե՞ շարունակվում է քրեական դատավարությունում. եթե կարճվում է, ապա ո՞ր հիմքերի դեպքում, և եթե շարունակվում է, ապա ո՞ր դեպքերում, քրեական դատարանը կարո՞ղ է արդյոք հայցը քննության առարկա չդարձնել, եթե այն խոչընդոտում է քրեական գործի քննությանը, ձգձգում է քրեական վարույթը և այլն:

Այս սկզբունքների լույսի ներքո վերլուծելով ՀՀ քր. դատ. օր.-ում ամրագրված քաղաքացիական հայցի ինստիտուտը՝ տեսնում ենք, որ որոշ դեպքերում այն հիմնված է միացյալ վարույթի հայեցա-

¹ Տե՛ս Дубровин В.В., նշված աշխատությունը, էջեր 117-118:

² Այս հարցերի մասին մանրամասն տե՛ս Պերեզն ընդդեմ Ֆրանսիայի գործով Եվրոպական դատարանի մեծ պալատի 2004 թվականի վճիռը, որում դատարանը մանրամասն վերլուծել և ներկայացրել է Ֆրանսիական քաղաքացիական հայցի ողջ գաղափարախոսությունը:

կարգի վրա (օրինակ՝ գործի կարճումը հանգեցնում է հայցի առանց քննության թողնելու՝ բնականաբար քաղաքացիական դատավարության կարգով հարուցելու պայմանով, հայցվորը և պատասխանողը հայցի մասով կարող են բողոքարկել դատավճիռը, հայցի մասով տալիս են բացատրություն, իսկ քրեական գործով ցուցնունք, ընդ որում՝ որպես վկա և այլն), որոշ դեպքերում օրգանական ամբողջականության (օրինակ՝ տուժողը համարվում է մեղադրանքի կողմի սուբյեկտ, և առանց հայցի էլ նա մասնակցում է քրեական վարույթին որպես կողմ, հայցը կարող է հարուցվել նաև առանց պատասխանող կողմի առկայության, հայց կարող է հարուցվել հանցագործության հաղորդման հետ միաժամանակ, հայցի ապացուցումը իրականացվում է քրեական դատավարության ապացուցման կանոններով և այլն): Ի դեպ, վերոգրյալը վերաբերում է ոչ միայն ՀՀ քրեական դատավարությունում ամրագրված քաղաքացիական հայցին, այլև ԱՊՀ երկրների օրենսդրությամբ ամրագրված քաղաքացիական հայցի ինստիտուտին, վերջինները ունեն նաև **Verweisung ad separatum** սկզբունքը¹: Այսինքն՝ կարելի է եզրակացնել, որ մեր (խորհրդային և

¹ Տե՛ս, օրինակ, ՌԴ, Ուզբեկստանի, Ղազախստանի, Բելառուսի քր. դատ. օր.-րը: Ի դեպ, տեսության մեջ այս ինստիտուտի վերաբերյալ առկա են երկու հակասական մոտեցումներ: Մի խումբ գիտնականների կարծիքով, այս ինստիտուտը պետք է բացառել քրեական դատավարությունից, քանի որ (1) այն չի համապատասխանում օրենսդրության այն պահանջին, որ, ի թիվս այլ հանգամանքների, պետք է պարզել հանցագործությամբ պատճառված վնասի բնույթն ու չափը, (2) այն արդյունավետ միջոց չէ, քանի որ դատավորներին թույլ է տալիս խուսափել քրեական գործի հետ մեկտեղ հայցը լուծելուց, (3) հայցի այսպիսի էլքը տանում է երկակի վարույթի, ինչը ստեղծում է մեծ դժվարություններ դատական մարմինների, հայցվորների և այլ անձանց համար (տե՛ս Մазалов А.Г. Гражданский иск в уголовном процессе. М., 1968, с.108, Кокорев Л.Д. Участие потерпевшего в советском уголовном процессе. Автореф. канд. дис. Воронеж, 1964, с.13-14): Մյուսները գտնում են, որ այս ինստիտուտը անհրաժեշտ է: Անդրադառնալով նման օրենսդրական կառուցակարգի անհրաժեշտության հարցին, Ա.Վ.Սեմինը բերում է երեք հիմնական փաստարկ՝ (1) դատարանի ծանրաբեռնվածությունը, (2) դատական քննության անընդհատության սկզբունքի ապահովումը: Հաշվարկների ձգձգումը հայցով հանգեցնում է քննության նշանակված այլ գործերի խափանման, հետևաբար խախտվում է դատական պաշտպանության կարիք զգացող այլ անձանց իրավունքները: (3) Հաշվարկների բարդությունը: Հանդիպում են բազմադրվագ գործեր, որտեղ մի քանի մեղադրյալներ են, որոնք կատարել են միևնույն կազմակերպությունից գողություն, սակայն բոլոր դրվագները կատարել են տարբեր կազմերով, քննության ընթացքում հափշ-

հետխորհրդային) իրավական համակարգում ձևավորվել է քաղաքացիական հայցի ինստիտուտի խառը մոդել, որը և մեր կարծիքով, համարվում է հայցի ինստիտուտի վերաբերյալ ողջ խառնաշփոթի և տեսության մեջ այդ ինստիտուտի վերաբերյալ առկա տարակարծությունների հիմքը: Նույն այն հեղինակները¹, որոնք գտնում են, որ հայցը պետք է բացառել քրեական դատավարությունից, հաշվի չեն առնում այն հանգամանքը, որ տուժողը քրեական դատավարությունում համարվում է մեղադրանքի կողմի ինքուրույն սուբյեկտ, որոշ դեպքերում համարվում է մեղադրող (մասնավոր մեղադրանքի գործերով) և այլն: Այսինքն՝ նա քրեական գործում հայտնվում է անկախ այն բանից՝ հայց հարուցե՞լ է, թե՞ ոչ, կամ ունի՞՞ գույքային պահանջ, թե՞ ոչ: Երբ հարցին նայում ենք այն տեսանկյունից, որ տուժողը քրեական դատավարության առանցքային սուբյեկտներից է, ինչպես ֆրանսիական իրավունքում, որ տուժողից է սկսվում նաև քրեական վարույթը, որը մի շարք գործերով հանդես է գալիս որպես մասնավոր մեղադրող, իսկ ընդհանրապես՝ «համամեղադրող», ուստի հարցը ստանում է այլ լուծում. այն դառնում է քրեական դատավարության օրգանական մաս և համարվում է տուժողի իրավունքների պաշտպանության երաշխիք: Այստեղից կարելի եզրակացնել, որ մեր իրավական համակարգում քաղաքացիական հայցը որպես **միացյալ վա-**

տակվածի մասը վերադարձրել են և այլն: Այժմ անհրաժեշտ է հաշվարկել՝ ով որքան պետք է հատուցի, ինչը վերոնշյալ պատճառներով հնարավոր չէ կատարել, հատկապես երբ քաղաքացիական հայցվորը պասիվ վարքագիծ է դրսևորում (Семин А.В. Исполнение приговора в части гражданского иска: дисс. канд. юрид. наук. Ижевск, 2002, с.46-48): Ձ. Ջինատուլլինը նշում է, որ այս ինստիտուտի շնորհիվ քր. դատ. օր-ը որդեգրել է հայցը բացառապես քրեական դատավարությունում լուծելու հայեցակարգը: Ուշագրավն այն է, որ վերջին մոտեցումը արտահայտում է հատկապես այն հեղինակը, որի կարծիքով միացյալ վարույթը «իրավաբանական սուտ է», իսկ հայցը՝ բացառապես քրեադատավարական ինստիտուտ (տե՛ս Зинатуллин 3.3. Возмещение материального ущерба в уголовном процессе. Казань, 1974, с.15-6, 76-77): Ասվածը ցույց է տալիս, որ հեղինակները, հստակ չպատկերացնելով հայցի հայեցակարգերը, քննադատելով մի հայեցակարգը, առաջարկում են այնպիսի լուծումներ, որոնք բխում են իրենց իսկ քննադատած հայեցակարգից:

¹ Տե՛ս Бозров В., Гражданский иск в уголовном процессе неуместен // Российская юстиция. 2001/5.

րույթ բնութագրելը «իրավաբանական սուտ է»¹, որի տեսանկյունից հանցագործությամբ պատճառված վնասի հատուցումը քրեական դատավարությունում թույլատրելի գնահատվում է որպես քրեական և քաղաքացիական հայցերի հասարակ միավորում, քանի որ հենց դա է թույլ տալիս տուժողի խախտված գույքային իրավունքների վերականգնումը կտրել քրեական դատավարությունից և այն ամբողջությամբ դասել քաղաքացիական դատավարության ոլորտին: Միացյալ վարույթի տեսությունը մեր համակարգում կայացած չէ հենց իր տեսական հիմքով, քանի որ տուժողի կրած նյութական վնասը հետևանք է հանցագործության, և նրա հատուցումը իրականացվում է քրեական դատավարության օրենսդրությամբ կանոնակարգված գործունեությամբ, որտեղ տուժողը համարվում է մեղադրանքի կողմի սուբյեկտ և քրեական վարույթում իրականացնում է իր շահերի պաշտպանության գործառույթ, ուստի խոսք չի կարող լինել երկու վարույթների արհեստական միացման մասին, ավելին՝ նույն վարույթում քրեական և քաղաքացիական գործերի մասին. նման տարանջատումն արհեստական է: Եթե ելնենք այդ գաղափարախոսությունից, ապա միայն հայցի մասով դատավճռի բողոքարկումը, այնուհետև՝ բեկանումը և նոր քննության ուղարկելը չպետք է թույլատրել, քանի որ գործ ունենք քաղաքացիական գործի հետ, որի քննության իրավասությունը քաղաքացիական դատարանին է քաղաքացիական դատավարության կարգով, մինչդեռ գործող օրենսդրության շրջանակներում գործ ունենք քրեադատավարական հարաբերությունների հետ: Քրեադատավարական նորմերը, որոնք կանոնակարգում են տուժողի գույքային խախտված իրավունքների վերականգնման հայցային վարույթը, իրենց համակցությամբ ձևավորում են քաղաքացիական հայցի ինստիտուտը: Դրանք կարգավորում են քրեական դատավարության մասնակիցների վարքագիծը և հանցագործությամբ պատճառված վնասի հատուցմանը վերաբերող առաջացող դատավարական հարաբերությունները: Դրա համար քրեական դատավարությունում քաղաքացիական հայցը պետք է գնահատել որպես քրեական դատավարության օրգանական մաս: Այլ կերպ ասած՝ խորհրդային և հետխորհրդային իրավական համա-

¹ Միացյալ վարույթը այսպես է բնութագրում Չ. Չ. Չինատուլլինը, տե՛ս Зинатуллин З.З. Возмещение материального ущерба в уголовном процессе. Казань, 1974, с. 15-16.

կարգում խոսելով քրեական դատավարությունում քաղաքացիական հայցի գոյության հարցի մասին՝ անհրաժեշտ է ելակետ ընդունել **օրգանական ամբողջականության** հայեցակարգը և հայցը բնութագրել որպես քրեադատավարական ինստիտուտ, ընդ որում՝ բացառելով միացյալ վարույթի բոլոր տարրերը քրեական դատավարությունից, իսկ որպես տուժողի գույքային իրավունքների պաշտպանության լրացուցիչ կամ ֆակուլտատիվ մեխանիզմ՝ թույլատրել հայցի հարուցումը նաև քաղաքացիական դատավարության կարգով:

Sergey Marabyan

*Candidate of Legal Sciences, Assistant Professor, YSU Chair of Criminal Procedure and Criminalistics,
Advisor to Chairman of the Court of Cassation of the RA*

**HISTORICAL AND THEORETICAL PROBLEMS OF ORIGIN
AND DEVELOPMENT OF CIVIL ACTION
IN CRIMINAL PROCEDURE
(comparative-legal analysis)**

This research work is dedicated to the comprehensive study of the institute for problems of origin and development of civil action in criminal proceedings.

In the scope of research the author has shown that the institute of civil action generally is connected with the issues such as division of criminal and civil jurisdiction, essence and form of criminal proceedings, interconnection of criminal and civil law, the system of testimony, the sort of truth recognised by court and so on.

Due to the most accepted approach the founders of the institute for civil action in criminal proceedings are France and Germany which enshrined in their criminal proceedings regulation about abovementioned institute.

In Armenian legal system the institute for civil action criminal proceedings is connected with USSR's Regulation on criminal proceedings adopted in 1864. Many principles enshrined in 1864's

regulation later kept their role particularly being enshrined in soviet, even postsovietic countries' laws included in Armenian laws.

In the result of research the author concluded that there are two historically founded fundamental concepts on the institution of civil action in criminal proceedings which are the concept of joint action, the concept of organic completeness. Due to interrelation these two concepts was recognised the third concept too which is mix concept. The latter which was concept existing in criminal procedure of USSR was transmitted to postsovietic legal systems.

The author has found that there are four criteria which decide the model of concept which are 1) the status of victim, 2) from which point of criminal proceeding it is possible to start civil action and how, 3) which means are applicable to proofs: criminal or civil proceedings law, by whom this process is realized: by litigant or state officer, 4) how ends (cease) the civil action in criminal proceedings.